EU4Energy
Covenant of Mayors for Climate & Energy Eastern Partnership

2024 թվականի փետրվար

ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՓԱԿՎԱԾ ՔԱՐՀԱՆՔԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

– Արթիկ, Հայաստան

Մի խոսքով

Արթիկը միացել է «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը 2014թ.-ի հունիսին, իսկ ավելի ուշ՝ 2022թ.-ի դեկտեմբերին համայնքը միացել է նախաձեռնության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նոր փուլին:
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԲԾԻԳ) պետական գործակալության կողմից՝ Հարմարվողականության հիմնադրամի (ՀՖ) ֆինանսական աջակցությամբ, իրականացվող ծրագիրը նպատակ ունի ուժեղացնել կլիմայական ռիսկերի հանդեպ խոցելի Արթիկ համայնքի դիմադրողականությունը հիդրոօդերևութաբանական սպառնալիքների նկատմամբ, որոնց հաճախականությունը և ինտենսիվությունը կլիմայի փոփոխության հետևանքով ավելանում է:

Ծրագրի հատուկ նպատակներն են.

- Բարձրացնել բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության մակարդակը.
- Կանխել ջրհեղեղները և վերացնել դրանց հետևանքները.
- Վերականգնել կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցություններից վնասված բնական լանդշաֆտը.
- Կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում բարելավել համայնքային արտադրողների, հաստատությունների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հարմարվողականության ներուժը:

Նախապատմություն

Հանրապետության շինարարական քարի (տուֆի) արտադրանքի ավելի քան 60%-ը արտադրվում է Արթիկում: Քարահանքերի երկարատև շահագործումը բացասաբար է ազդել համայնքի շրջակա միջավայրի վրա: Հանքերի շահագործման պատճառով գյուղատնտեսական և բնական լանդշաֆտների հարյուրավոր հեկտարներ դեգրադացվել և կորցրել են բնական ճանապարհով վերականգնվելու իրենց հնարավորությունը:
Բացի այդ, փոշին ուժեղ քամիների միջոցով և պինդ մնացորդները ձնհալքի ու տեղումների միջոցով տարածվել են մեծ հեռավորությունների վրա՝ աղտոտելով բնական ագրոլանդշաֆտները: Արդյունքում ընկնում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, բերքի որակը և կլիմայի փոփոխությանը բնական լանդշաֆտների հարմարվողականության մակարդակը:
Մեկ այլ խնդիր է վերջին 20 տարում ուժեղ հեղեղումների հաճախականության ավելացումը, ինչը պայմանավորված է տարածաշրջանին ոչ բնորոշ գարնանային ջերմաստիճաններով: Արդյունքում դա արագացնում է ձնհալը՝ առաջացնելով ուժեղ ջրհեղեղներ: 2016թ.-ի հունիսին տեղի ունեցած ջրհեղեղը Արթիկ քաղաքի ենթակառուցվածքներին և բնակչությանը պատճառել է ավելի քան 210,000 ԱՄՆ դոլարի վնաս:
Նշված խնդիրները լուծելու և Արթիկի հարմարվողական կարողությունները մեծացնելու նպատակով ԲՇԻԳ-ն ծրագրի իրականացման համար ՀՖ-ից հաջողությամբ մոբիլիզացրել է ընդհանուր առմամբ 1435100 ԱՄՆ դոլար:

Գործողությունների նկարագրությունը

01

Բաղադրիչ #1. Կլիմայի փոփոխության և մարդածին գործոնների ազդեցության տակ գտնվող տարածքի բնական լանդշաֆտների վերականգնում, կառավարում և հարմարվողականության ներուժի ուժեղացում: Գործողություն. 40 հեկտար չշահագործվող քարահանքի վերականգնում, անտառապատ պարկի և ռեկրեացիոն գոտու հիմնում, ոռոգման համակարգի կառուցում:

02

Բաղադրիչ #2. 300 հա վարելահողերի, 190 հա արոտավայրերի, 15 հա խոտհարքների կլիմայի փոփոխությանը հարմարվողականության ավելացում: Գործողություն. Վարելահողերի բերրիության բարձրացում, արոտների ու մարգագետինների կայունության ուժեղացում, արոտավայրերի և մարգագետինների բուսածածկույթի վերականգնում:

03

Բաղադրիչ #3. Ջրհեղեղների կանխարգելում և կառավարում. Գործողություն. Կիրճերում ջրերի հոսքի մեղմացման միջոցառումներ, հողապատնեշի ամրացում և կայունության բարձրացում, առավել դեգրադացված լանջերի կայունացում, վաղ ահազանգման համակարգի ներդրում, աղբամանների տեղադրում Արթիկ քաղաքով անցնող հեղեղատարների երկայնքով, հեղեղատարի մաքրում, Արթիկի քաղաքային օդերևութաբանական կայանի վերանորոգում:

04

Բաղադրիչ #4. Բնակչության տեղեկացվածության և գիտելիքների մակարդակի բարձրացում քարահանքերի թափոնների և հեղեղումների կառավարման վերաբերյալ: Գործողություն. Կլիմայի փոփոխության մարտահրավերների վերաբերյալ համայնքի կարողությունների զարգացում, կլիմայի փոփոխությանը հարմարվողականության միջոցառումների և բնական աղետների վերաբերյալ բնակչության իրազեկման խթանում, զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներգրավում ծրագրի արդյունքների իրականացման և առաջմղման գործում:

Կիզակետում

Ծրագիրը համահունչ է կենսաբազմազանության պահպանմանն ուղղված մի շարք ռազմավարական փաստաթղթերին (ՀՀ բնապահպանական գործողությունների երկրորդ ազգային ծրագիր), ինչպես նաև լանդշաֆտների պահպանությանը, կայուն օգտագործմանն ու վերականգնմանը (Կենսաբազմազանության պահպանման, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման ՀՀ ռազմավարություն) և, մասնավորապես, համապատասխանում է Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության Հայաստանի ազգային գործողությունների ծրագրի նպատակներին՝ ուղղված Հայաստանում կլիմայական ռիսկերի նվազեցմանը և կառավարմանը՝ կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած խնդիրների լուծման, առաջ եկող հնարավորություններ լիովին օգտագործելու, սոցիալ-տնտեսական խոցելիության նվազեցման և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած կորուստներն ու վնասները կանխարգելելու միջոցով:

Արթիկ, Հայաստան

Բնակչությունը՝	***Տարածքը՝***
52 263	***416 քառ. կմ***
Քաղաքապետերի դաշնագիրը ստորագրվել է	***CO_2 արտանետումների նվազեցման թիրախ՝***
20.06.2014թ	***35%***

Թիրախային ոլորտը, կլիմայական վտանգ(ներ)ը և բնակչության խոցելի խմբերը

Ծրագրի թիրախային ոլորտներն են՝ գյուղատնտեսությունն և անտառային տնտեսությունը, հողօգտագործման պլանավորումը, թափոնները, շրջակա միջավայրն ու կենսաբազմազանությունը, քաղաքացիական պաշտպանությունն ու արտակարգ իրավիճակները:

Կլիմայական վտանգներ են՝ առատ տեղումները, հեղեղումները, հեղեղումները, սելավները և սողանքները, որոնց էլ հասցեավորված է Ծրագրի իրականացումը:

Բնակչության խոցելի խմբեր են՝ փոքր համայնքների բնակիչները, մեծահասակները, կանայք և երեխաները, մշտական աշխատանք չունեցող բնակչությունն ու ցածր վարձատրվող բնակչությունն, ինչպես նաև այլ թիրախային խմբեր, որոնք ամենաշատն են տուժում կլիմայի փոփոխության պատճառով առաջացող բնական աղետներից և չունեն բավարար միջոցներ իրենց գույքին պատճառված վնասը վերացնելու համար:

ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ.

- Կլիմայի փոփոխության և մարդածին գործոնների ազդեցության տակ գտնվող տարածքի բնական լանդշաֆտների հարմարվողականությունն ու կայունությունը մեծանում են:
- Կլիմայի փոփոխության հետևանքով ջրհեղեղների հետևանքով առաջացած սոցիալական, տնտեսական և բնապահպանական սպառնալիքները կրճատվում են:
- Բարձրացվում է բնակչության իրազեկվածության և գիտելիքների մակարդակը ագրոլանդշաֆտների վերականգնման և հեղեղումների ռիսկի նվազեցման վերաբերյալ:

EU4Energy

Covenant of Mayors for Climate & Energy Eastern Partnership

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

https://www.adaptation-fund.org/project/artik-city-closed-stone-pit-waste-flood-management/

Ծրագրի ֆինանսավորում

Ֆինանսավորման աղբյուր(ներ).
Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է Հարմարվողականության հիմնադրամի կողմից դրամաշնորհային ֆինանսավորման միջոցով:

Ընդհանուր գումարը.
1 435 100 ԱՄՆ դոլար

Հիմնական թվեր

Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուների ընդհանուր թիվը՝ **15.000**

Կին շահառուների մասնաբաժինը՝ **60**%

Վերականգնված և բարելավված հարմարվողական հզորությամբ հողերի ընդհանուր մակերեսը՝ **30** հա հող (**75**%) վերականգնված

Ստեղծվել են զբոսայգիներ և ռեկրեացիոն գոտիներ. Ստեղծվել է **2** հա այգի և **10** հա ռեկրեացիոն գոտի

Վերականգնվել է քամիներից և անձրևի ինտենսիվ անբարենպաստ ազդեցություններից պաշտպանված հողաշերտը - **30** հա

Տեղադրված ոռոգման ջրի համակարգի ընդհանուր երկարությունը՝ **500** մ

Ստեղծված են բազմամյա բույսերի բազմամյա ցանքատարածություններ՝ **300** հա

Խոտամարգագետինների և վարելահողերի / արոտավայրերի մակերեսը՝ **15** հա / **190** հա

Գեոցանցերով ամրացված և խոտի ցանքով լանջերը - **500** մ³.

Մաքրված հեղեղատար կոյուղի – **120** մ

Արթիկ համայնքում տեղադրված աղբամանների թիվը՝ **150**

ԿԱՊ

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել՝

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0011, Արմենակ Արմենակյան փող., 129 շենք #129
փոստ՝ info@cep.am , antifraud@epiu.am
Հեռախոս՝ +374 10 651631
Կայք՝ www.epiu.am

Կոնտակտային անձ՝

Արմեն Եսոյան
ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ԾԻԳ» պետական գործակալության տնօրենի պաշտոնակատար.